



**ԻՆՔՆԱԿԱՍ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ
ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ
ՏԵՂԵԿԱՏՈՒ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ	3
2. ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ.....	4
3. ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ.....	5
4. «ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԿԱՄ ՄԵՐԺՄԱՆ ԿԱՐԳԸ.....	7
5. ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՅԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԸ.....	9
6. «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆԻ» ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՅՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԸ.....	12
7. ՀՀ ՕՐԵՆՔԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ.....	14
8. Հ Հ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆՑՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	18
9. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	28

1. ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Անվանումը

« Աղետի գոտու անօթևանների հանրային իրազեկում
ինքնակամ բնակելի կառույցների օրինականացման կարգի
մասին և մոնիտորինգ»

Նպատակը

Իրազեկում և խորհրդատվական աջակցություն աղետի գոտու
ինքնակամ կառույցների և իրավունք հաստատող
փաստաթղթերը չպահպանված կառույցների օրինականացման
ու տնօրինման կարգի մասին և այդ գործընթացի մոնիտորինգ:

Ապահովելով հասարակական մասնակցություն, այդ
գործընթացը դարձնել թափանցիկ, կանխել կոռուպցիոն
դրսևորումներն ու օրինախախտումները: Նպաստել ինքնակամ
բնակելի կառույցների օրինականացման և տնօրինման
օրենսդրության կատարելագործմանը, անօթևանների և
իշխանությունների միջև անվստահության մթնոլորտի ու
հակասությունների նվազեցմանը:

Իրականացման վայրը և ժամանակահատվածը

Շիրակի մարզ, Գյումրի
2010թ. հուլիս - 2011թ. մարտ

Ֆինանսավորման աղբյուրը

Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակ
Քաղաքացիական հասարակության
հիմնադրամ-2010

2. ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Շիրակի մարզում շուրջ 5000 անօթևան բնտանիքներ բնակվում են ժամանակավոր կացարաններում և ինքնակամ կառույցներում:

Աղետի գոտում առկա են հարյուրավոր բնակելի տներ, իսկ Գյումրիում նույնիսկ մի շարք թաղամասեր, որոնց նկատմամբ դրանցում երկար տարիներ բնակվող քաղաքացիների գույքային իրավունքների իրավական ձևակերպումը տրված չէ:

ՀՀ քաղաքաշինության նախարարության, տարածքային և ՏԻՄ իշխանությունների, անշարժ գույքի կադաստրի մոտավոր տվյալներով միայն Գյումրիում առկա են չօրինականացված շուրջ 3000 բնակելիներ:

Ինքնակամ կառույցների օրինականացման կարգը սահմանող ՀՀ կառավարության գործող որոշումներով և համապատասխան օրենսդրությունում թեև հաստատված չէ օրինականացման հստակ ժամանակացույց, սակայն մի շարք համայքների ավագանիներ ընդունում են որոշումներ, որոնցով բնակիչներին պարտադրում են կարճատև ժամանակահատվածում հսկայական գումարներ վճարելով օրինականացնել ինքնակամ կառույցները: ՏԻՄ իշխանությունները ոչ օրինական որոշումներ կայացնելիս շատ դեպքերում օգտվում են քաղաքացիների անիրազեկությունից: Նման խնդիրներ ունեցող քաղաքացիները փաստացի հայտնվել են անպաշտպան վիճակում, ինչը նպաստում է աղետի գոտու բնակիչների մի հոծ զանգվածի հիասթափությանն ու արտագաղթին:

3. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական սոցիալական խարտիա (1996)*

Հոդված 31

Բնակարանի իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ ուղղված.

1. պատշաճ չափանիշներով բնակարանների մատչելիության խթանմանը,
2. անօթևանության կանխմանն ու կրճատմանը՝ այն աստիճանաբար վերացնելու նկատառումով,
3. բնակարանի գինը բավարար միջոցներ չունեցողների համար մատչելի դարձնելուն:

ՀՀ Սահմանադրություն*

Հոդված 34

Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:

ՀՀ հողային օրենսգիրք*

(Ընդունվել է 02.05.2001)

Հոդված 60. Քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողերը

Արգելվում է քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք՝

- 1) պատմական եւ մշակութային արժեքների օբյեկտներ են.
- 2) բնության հատուկ պահպանվող տարածքներից պետական բնական արգելոցներ են, բնության պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ, ազգային զբոսայգիներ, ծառաբանական զբոսայգիներ, բուսաբանական այգիներ, ինչպես նաև այդ նպատակների համար պահեստավորված տարածքներ.
- 3) օրենքով պաշտպանվող սահիտարական պահպանության տարածքների սահմանների շրջանում բուժիչ-առողջարանային վայրեր են, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը.
- 4) զբաղեցված են պետական սեփականություն հանդիսացող անտառով.
- 5) պետական մեղիորատիվ համակարգերի կամ ջրային ֆոնդի կազմի մեջ մտնող ջրային օբյեկտների հողեր են, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը.
- 6) բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են (հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գետափեր, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր եւ ընդհանուր օգտագործման այլ տարածքներ).
- 7) պետության կողմից հաշվառված եւ գրանցված օգտակար հանածոների տեղադրվածություններ են.
- 8) ենթարկված են ռադիոակտիվ եւ քիմիական աղտոտման, կենսածին վարակման.
- 9) կառավարության սահմանած ցանկով տրամադրված են պետական գիտահետազոտական կազմակերպությունների (կրթական, սելեկցիոն եւ այլն)՝ մինչեւ սահմանված կարգով դրանց լուծարումը.
- 10) զբաղեցված են համայնքի վարչական սահմաններից դուրս ընդհանուր օգտագործման արոտավայրերով անասունների անցատեղերով, ճանապարհներով, բնական ջրհորներով, աղբյուրներով եւ տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ, այլ օբյեկտներով.

11) ջրային օբյեկտների եւ ավազանների առափնյա շերտերի, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային, երկաթուղային ճանապարհների, խողովակաշարային եւ այլ տրանսպորտի համար առանձնացված շերտերի, էլեկտրահաղորդիչ գծերի, մայրուղային, ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի, գազատարների, ջրանցքների, ինչպես նաև դրանց հեռանկարային զարգացման համար առանձնացված (պահեստավորված) հողեր են.

12) վիճելի տարածքներ են՝ մինչև վեճերի լուծումը.

13) հատուկ նշանակության հողեր, զինվորական եւ քաղաքացիական գերեզմանոցներ են:

Օրենքով կարող են սահմանվել քաղաքացիների եւ իրավաբանական անձանց սեփականության չփոխանցվող այլ հողամասեր:

4. «ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՅՑ» ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԸԱ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԿԱՍ ՄԵՆԺՄԱՆ ԿԱՐԳԸ

«Ինքնակամ կառույց» հասկացությունը, դրա իրավական կարգավիճակը, ինչպես նաև օրինականացման կամ մերժման կարգը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ կառավարության N 912՝ «Պետական համայնքների հողերի վրա ապօրինի կառույցների տնօրինման կարգի մասին» և N 731՝ «Պետական համայնքների հողերի վրա ապօրինի կառույցների գրանցման կարգի մասին» որոշումներով:

«Ինքնակամ կառույց» հասկացությունը

«Ինքնակամ կառույց» հասկացությունը և դրա իրավական կարգավիճակը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 1-ին կետով. «Ինքնակամ կառույց է համարվում

օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի եւ կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շէնքը, շինությունը կամ այլ կառույցը»:

Ինքնակամ կառույցի օրինական ճանաչման կարգը

Համաձայն Քաղ. օր. 188 - րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել: Ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է հողամասը, որի վրա գտնվում է կառույցը»:

Ինքնակամ կառույցը օրինական ճանաչող իշխանության մարմինը

Համաձայն Քաղ. օր. 188 - րդ հոդվածի 4-րդ կետի՝ «Ինքնակամ կառույցները կարող են ճանաչվել օրինական՝ համայնքի ղեկավարի /Երևանում՝ Երևանի քաղաքապետի/, համայնքի վարչական սահմաններից դուրս՝ մարզպետների կողմից, կառավարության սահմանած կարգով» /կետ 4/:

Օրենքը չի բացառում ինքնակամ կառույցի օրինական ճանաչելը նաև դատական կարգով՝ եթե թվարկված մարմինները մերժել են:

Ինքնակամ կառույցի օրինական ճանաչելու մերժման հիմքերը

Ինքնակամ կառույցի օրինական ճանաչումը մերժելու հիմքերը սահմանված են Քաղ. օր. 188 - ընդ հոդվածի 5-րդ կետով: «Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք»: Ինքնակամ կառույցի օրինական ճանաչման դիմումի մերժումը պետք է հիմնավորված լինի օրենքի այս պահանջներից որևէ մեկով կամ մի քանիսով, հակառակ դեպքում մերժումն անօրինական է:

***5. ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՍ ԲՆԱԿԵԼԻ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻ ՄԱՍԻՆ
2009թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՍԱՎՈՐ Ս.
Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՅԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ
ԵՎ ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐԸ *****

Հարց

«Ինձ են դիմել Գյումրի քաղաքի և մարզի մի շարք գյուղական համայնքների երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած բնակիչներ, որոնք բնակվում են իրենց կողմից կառուցված ինքնակամ կառույցներում: Վերջիններս մտահոգված են այն հանգամանքով, որ ստիպված են սահմանված սուղ ժամկետում զբաղվել ինքնակամ կառույցների օրինականացման

գործընթացով, ինչպես նաև ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի համաձայն կատարել համապատասխան վճարումներ մեկամսյա ժամկետում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռ չի ավարտվել բնակարանաշինությունը, որի արդյունքում հնարավոր է, որ նույն ինքնակամ կառույցի բնակիչը ապահովվի բնակարանով և տվյալ պարագայում արդեն իսկ բնակչի նախկին օթևանը ենթակա է քանդման, ուստի աննպատակահարմար է բնակչին ստիպել կատարել լրացուցիչ ու անիմաստ ծախսեր:

Բնակիչները հայցում են իմ միջնորդությունը ՀՀ կառավարությանը՝ հարցի դրական լուծման ակնկալիքով:

Խնդրում եմ պարզաբանել՝ ի՞նչ հնարավորություններ կան վերոնշյալ խնդիրը ի շահ բնակիչների լուծելու, այդ թվում Կառավարությունը կիրառելի համարում է արդյոք օրինականացման գործընթացի հետ կապված սահմանված գումարների տարաժամկետ վճարումը, հետաձգումը, աղետի գոտու բնակիչների համար արտոնյալ պայմանների ստեղծումը, մասնավորապես՝ հաշվի առնելով Երևանի փորձը մինչև 300 քառակուսի մետր հողատարածքը և անօրինական կառույցը տվյալ բնակչին անհատույց տրամադրելու և այլնի վերաբերյալ»:

Պատասխան

ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ պարոն Ա. Գևորգյանին

«Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 36-րդ կետի պահանջների համաձայն ինքնակամ կառույցն օրինականացվելուց հետո այդ կառույցն իրականացրած անձի կողմից գնման նախապատվության առաջարկը չընդունվելու դեպքում այն կարող է տրամադրվել վարձակալությամբ, իսկ նույն կետով նախատեսված կարգով

բնակելի նշանակության անշարժ գույքի վարձակալն այդ գույքի գնման նախապատվության իրավունք ունի, ուստի նպատակահարմար չենք գտնում օրինականացման գործընթացի հետ կապված սահմանված օրինականացման վճարները և (կամ) վաճառքի գները տարածամկետ վճարելու մասով փոփոխություններ կատարել վերը նշված ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգում:

Միաժամանակ հայտնվում է, որ արդեն իսկ ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողովի քննարկման է ներկայացվել «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծը, որով, ըստ էության, լուծում է տրվում պատգամավոր Ս. Բալասանյանի կողմից բարձրացված հարցին»:

*ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական
կոմիտեի նախագահ՝ Ե. Զախարյան
(23.12.2009թ.)*

Պատասխան

«Ինքնակամ կառույցների օրինականացման հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ըստ որի նշված գործընթացի ժամկետային սահմանափակում նախատեսված չէ»:

*ՀՀ քաղաքաշինության
նախարար Վ. Վարդանյան*

**6. ԻՆՔՆԱԿԱՄ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՄԱՍԻՆ «ՇԻՐԱԿ
ԿԵՆՏՐՈՆԻ» ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ
ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ,
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ ****

Հարց

Մեր կազմակերպությունը իրականացնելու է աղետի գոտում ինքնակամ բնակելի կառույցների օրինականացման կարգի մասին հանրային իրազեկում և այդ գործընթացի մոնիտորինգ: Այդ նպատակով խնդրում ենք մեզ ներքոհիշյալ հարցերի վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն:

ՀՀ նախագահի կողմից 18.05.2010թ. վավերացվեց «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքը: Սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ օրենքի մասին չկա պատշաճ իրազեկում, մասնավորապես՝ հետևյալի մասին.

1. որ դեպքերում և ինչպիսի ինքնակամ կառույցների նկատմամբ է գործում օրենքը, որ կառույցներից և ինչ փաստաթղթեր են ձեռք բերելու ինքնակամ կառույցներ տնօրինողները,
2. ինչպիսի վճարներ են նախատեսված, որքան և որտեղ պետք է վճարեն ինքնակամ կառույցներն օրինականացնող քաղաքացիները,
3. արդյոք իրականացվել է գույքագրում Գյումրիում առկա ինքնակամ բնակելի կառույցների և եթե Ձեր ձեռքի տակ առկա է նման ցանկ, խնդրում ենք տրամադրել մեզ:

Պատասխան

«Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործողության ոլորտը

տարածվում է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված, տիրապետվող և հիշյալ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա անհատական բնակելի տների և դրանց կից օժանդակ շինությունների, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերի, ինչպես նաև քաղաքացիներին պատկանող բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող՝ մինչև 300 քմ սահմանազատված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի և (կամ) դրանց վրա կառուցված բնակելի տների և (կամ) բնակելի նշանակության օժանդակ շինությունների վրա, իսկ ինքնակամ կառույցների օրինականացման ու օրինականացման համար սահմանված վճարների հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն և ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշումներով:

Ինչ վերաբերում է Գյումրի քաղաքում առկա ինքնակամ բնակելի կառույցների գույքագրմանը, ապա հայտնվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 27.07.2000թ. թիվ 422 որոշմամբ հաստատվել է ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի, տիրագուրկ (լքված) անշարժ գույքի հաշվառման կարգը, որի 12-րդ կետի պահանջների համաձայն ինքնակամ կառուցված շենք, շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի ընթացիկ հաշվառումը իրականացնում է համայնքի ղեկավարը, ուստի Գյումրի քաղաքում առկա ինքնակամ բնակելի կառույցների

վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել համայնքի ղեկավարին:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Ա. Մուսայան (18.16.2010թ.)

7. ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՀ Ազգային ժողովը 2010թ. ապրիլի 27-ին ընդունեց օրենք «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Այն ՀՀ նախագահի կողմից վավերացվեց մայիսի 18-ին:

2008թ. ընդունված հիշյալ օրենքը վերաբերում էր միայն Երևան քաղաքին, սակայն կատարված փոփոխություններով այն դարձավ օրենք ամբողջ Հանրապետության համար: Եվ պատահական չէ, որ օրենքում փոփոխություններ կատարելու ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Երվանդ Զախարյանի կողմից տրված հիմնավորման մեջ հատուկ շեշտված է աղետի գոտում օրենքի կարևորությունը: Հիմնավորումում մասնավորապես ասվում է.

«Աղետի գոտու բնակավայրերում այս խնդրի առաջացման օբյեկտիվ պատճառները հանդիսացան երկրաշարժից անմիջապես հետո բնակչությանը բնակելի կացարաններով ապահովելու նպատակով հաճախ առանց հողահատկացման և շինարարության փաստաթղթային ձևակերպման... իրականացված լայնածավալ շինարարական աշխատանքները, որոնց արդյունքում ևս կառուցվեցին և բնակեցվեցին բազմաթիվ անհատական բնակելի տներ, որոնց նկատմամբ բնակիչների

իրավունքները մինչ օրս չեն ստացել որևէ իրավական ձևակերպում»:

Ստորև ներկայացնում ենք այդ օրենքը փոփոխություններով և լրացումներով:

ՀՀ օրենքը

Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին

Հոդված 1. ՀՀ համայնքների վարչական տարածքներում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված եւ սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (ներառյալ՝ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում) այն անհատական բնակելի տները եւ դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման եւ սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը եւ (կամ) հողատկացման հիմքերը, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա սույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Հոդված 2. ՀՀ համայնքների վարչական տարածքներում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը տիրապետվող եւ սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (ներառյալ՝ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում)՝ քաղաքացիներին պատկանող բնակելի տան կառուցման եւ սպասարկման

համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող՝ մինչև 300 քառակուսի մետր սահմանազատված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը եւ (կամ) դրանց վրա կառուցված բնակելի տները եւ (կամ) բնակելի նշանակության օժանդակ շինությունները, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա սույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, որի (որոնց) սեփականությունը համարվող հողամասին կից է ավել օգտագործվող հողամասը եւ (կամ) շինությունները, եւ ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Հոդված 3. Սույն օրենքի 1-ին եւ 2-րդ հոդվածներով նախատեսված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք է ֆիզիկական անձի դիմումի հիման վրա կայացված համայնքի ղեկավարի որոշումը, որում պարտադիր նշվում են՝

1) իրավունք ձեռք բերող ֆիզիկական անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյալ օրը, ամիսը, տարին), բնակելի տան հասցեն.

2) տեղեկատվություն բնակելի տան կառուցման տարեթվի մասին.

3) տեղեկատվություն այն մասին, որ անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին եւ 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

Համայնքի ղեկավարի որոշման հետ գրանցող մարմին է ներկայացվում օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համապատասխան հողամասի հատակագիծը:

Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված 300 քառակուսի մետր հողամասից ավել զբաղեցված, չկառուցապատված հողամասի առկայության դեպքում ավել օգտագործվող հողամասը սահմանված կարգով օտարվում է դրա կադաստրային արժեքով:

Սույն օրենքի ուժով ձեռք բերվող ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում համայնքի ղեկավարի որոշումը կայացվում է սեփականության բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության առկայության դեպքում, բացառությամբ, եթե սույն օրենքի ուժով ձեռք բերվող ընդհանուր սեփականության իրավունքի մասնակիցները գրանցված ամուսիններ են, եւ դիմումը ներկայացրել է ամուսիններից մեկը:

Սույն օրենքի 1-ին հոդվածի ուժով անհատույց տրամադրվող՝ անհատական բնակելի տների կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսի առավելագույն չափը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Հոդված 4. Սույն օրենքը չի տարածվում մինչեւ 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված եւ սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (ներառյալ՝ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում) կիսակառույց շենքի, շինությունների եւ դրանցով զբաղեցված հողամասերի, մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը սույն օրենքի 1-ին եւ 2-րդ հոդվածներով սահմանված բնակտարածության իրացման դիմաց փոխհատուցում ստացած անձանց, պետական եւ համայնքային հիմնարկներին ամրացված պետական կամ համայնքային հողամասերի վրա, ինչպես նաեւ պետական եւ համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների ամրացված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի վրա:

Սույն օրենքի 1-ին եւ 2-րդ հոդվածների պահանջները չբավարարող անշարժ գույքի հետագա կարգավիճակը որոշվում

Է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ Ս.ՍԱՐԳՍՅԱՆ
28.06.2008

8. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ
ՏԼՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(18 մայիսի 2006 թ. N 912-Ն)

II. քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացումը

8. Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում (տնամերձ, այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար հողամասեր) գտնվող՝ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության (անկախ դրանց ավարտվածության աստիճանից) շենքերը, շինությունները կարող են ճանաչվել օրինական, եթե դրանք բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանները:

9. Հողամասի սեփականատերն ինքնակամ կառույցի օրինականացման նպատակով, ըստ գույքի գտնվելու վայրի, պետք է դիմի համապատասխան համայնքի ղեկավարին (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետին), իսկ համայնքի վարչական սահմաններից դուրս՝ համապատասխան մարզպետին:

Հողամասի սեփականատերը դիմումի հետ միասին պետք է ներկայացնի լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով տրված սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը՝ ինքնակամ կառույցների համապատասխան նշումներով, իսկ հողամասի ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության դեպքում՝ նաև բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնությունը:

10. Համայնքի ղեկավարը (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը), իսկ համայնքի վարչական տարածքից դուրս՝ համապատասխան մարզպետը դիմումն ստանալուց հետո՝ սույն կարգի 8-րդ կետում նշված՝ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության կառույցների համար 30-օրյա ժամկետում ընդունում է դրանց օրինականացման կամ մերժման մասին որոշում:

11. Սույն կարգի 8-րդ կետում նշված ինքնակամ կառույցների օրինականացման մասին որոշման մեջ պարտադիր պետք է նշվեն՝

ա) ֆիզիկական անձանց դեպքում՝ հողամասի սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը, գտնվելու վայրը,

բ) հողամասի գտնվելու վայրը (հասցեն),

գ) դրույթներ այն մասին, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

դ) այն մասին, որ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական

խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուս պահանջելու իրավունք,

ե) այն մասին, որ որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

12. Եթե հողամասին դեռևս տրամադրված չէ հասցե, ապա օրինականացման մասին որոշմամբ դրան՝ սահմանված կարգով տրամադրվում է նաև հասցե:

13. Ինքնակամ կառույցն օրինական ճանաչվելու դեպքում հողամասի սեփականատերը համապատասխան բյուջե պետք է մուծի հետևյալ դրույքաչափերով վճարներ՝

ա) ինքնակամ կառուցված բնակելի տների և այգետնակների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով.

բ) բնակելի տներին և այգետնակներին կից ինքնակամ կառուցված տնտեսական և օժանդակ կառույցների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ քաղաքային համայնքներում՝ բազային տուրքի 10-ապատիկի, գյուղական համայնքներում՝ 6-ապատիկի չափով:

IV. պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցների սնօրինումը

33. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում (եթե դրանք Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս չեն) գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության ճանաչումից հետո ինքնակամ կառուցված բնակելի տների և մինչև 200 քառ. մետր կառույցների համար՝ 30, իսկ 200 քառ. մետրից ավելիի դեպքում՝ 60-օրյա ժամկետում համայնքի

դեկավարը (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը), իսկ համայնքի վարչական տարածքից դուրս՝ համապատասխան մարզպետն ընդունում է ինքնակամ կառույցների օրինականացման կամ չօրինականացված ինքնակամ կառույցները քանդելու մասին որոշում:

Օրինականացման մասին որոշման մեջ նշվում են՝

ա) հողամասի գտնվելու վայրը (սահմանված կարգով տրամադրված հասցեն), դրա մակերեսը,

բ) հողամասի նպատակային կամ գործառական նշանակության փոփոխման դեպքում՝ տվյալներ՝ համապատասխան հիմնավորումներով,

գ) տվյալներ օրինականացված շենքի, շինության մասին (մակերեսը, գործառական նշանակությունը),

դ) տվյալներ օրինականացված շենքի, շինության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու մասին,

ե) հաստատված՝ պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին համապատասխանելու մասին տվյալներ,

զ) օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը՝ տվյալ կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անելու մասին տվյալները:

34. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինական ճանաչված կառույցների նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում օրինականացման լիազոր մարմնի կողմից տվյալ կառույցը՝ սույն կարգի 35-րդ կետով սահմանված գներով, իսկ դրա համար սահմանված

կարգով առանձնացված հողամասը՝ կադաստրային արժեքով ձեռք բերելու համար գրավոր առաջարկություն է արվում կառույցն իրականացրած անձին: Առաջարկության մեջ պարտադիր նշվում են անշարժ գույքի տվյալ միավորի հասցեն, կառույցների և հողամասի մակերեսները, առաջարկության ընդունման համար սույն կարգի 36-րդ կետով նախատեսված ժամկետը, հողամասի կադաստրային արժեքը, ինչպես նաև կառույցի վաճառքի՝ սույն կարգի 35-րդ կետով սահմանված գները:

35. Սույն կարգի 34-րդ կետով նախատեսված ուղղակի վաճառքը կատարվում է հետևյալ գներով՝

ա) բնակելի տների, այգետնակների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով:

Ինքնակամ կառույցների օրինականացման վճարների նկատմամբ ըստ գույքի գտնվելու վայրի / տարածագնահատման գոտի / կիրառվում են ՀՀ կառավարության 17.04.03թ. N 470 –Ն որոշումով հաստատված գործակիցները:

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, անհատական բնակելի տների, այգետնակների (ամառանոցների) և դրանց կից շինությունների, առանձին կանգնած հասարակական ու արտադրական նշանակության շինությունների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական և արտադրական նշանակության շինությունների տեղադրության (տարածագնահատման գոտիականության) գործակիցներ

Գոտին	1	2	3	4	5	6	7	8
Գործակիցը	1.0	0.80	0.64	0.51	0.41	0.32	0.26	0.21

Գոտին	9	10	11	12	13	14	15	16
Գործակիցը	0.17	0.13	0.11	0.086	0.069	0.055	0.044	0.035

Շիրակի մարզ

VIII 0,21 ք. Գյումրի, ութերորդ գոտու սահմաններն անցնում են հետևյալ փողոցներով՝ սկսած ավտոկայանի հրապարակից, ավտոկայանի հրապարակն ամբողջությամբ, Գյումրի գետակով մինչև Տերյան փողոցի հետ հատումը, Տերյան փողոցով մինչև Նալբանդյան փողոցի հետ հատումը, Նալբանդյան փողոցով մինչև Օզանյան փողոցի հետ հատումը, Օզանյան փողոցով մինչև Շիրակացու փողոցի հետ հատումը, Շիրակացու փողոցով մինչև Ալեք Մանուկյան փողոցի հետ հատումը, Ալեք Մանուկյան փողոցով մինչև Անկախության հրապարակ, Անկախության հրապարակի հյուսիսային կողմով մինչև Խրիմյան Հայրիկի փողոց, Խրիմյան Հայրիկի փողոցով մինչև Կույբիշևի փողոցի հետ հատումը, Կույբիշևի փողոցով մինչև Տիգրան Մեծի փողոցի հետ հատումը, Տիգրան Մեծի փողոցով մինչև Ղանդիլյանի անվան (կայարանամերձ) հրապարակ՝ հրապարակն ամբողջությամբ, Ղանդիլյանի անվան հրապարակի և Գորկու փողոցի հատումից՝ Գորկու փողոցով մինչև Մուսայելյան փողոցի հետ հատումը, Մուսայելյան փողոցով մինչև Տերյան փողոցի հետ հատումը, Տերյան փողոցով մինչև Տիգրանյան փողոցի հետ հատումը, Տիգրանյան փողոցով մինչև ավտոկայանի հրապարակ:

IX 0,17 ք. Գյումրի, իններորդ գոտու սահմանները համընկնում են ութերորդ գոտու արտաքին սահմանագծերի հետ, իսկ արտաքին սահմաններն անցնում են՝ սկսած քաղաքի հարավային սահմանագծի և Երևանյան խճուղու հատումից, Երևանյան խճուղով մինչև Ալավերդյան փողոցի հետ հատումը, Ալավերդյան փողոցով մինչև Լազոյի փողոցի հետ հատումը, Լազոյի փողոցով մինչև Գ. Նժդեհի հրապարակի հետ հատումը, Գ. Նժդեհի հրապարակից Ախուրյան խճուղով մինչև Գյումրի ու

Արթիկ երկաթգծի հետ հատումը, Գյումրի ու Արթիկ երկաթգծով մինչև երկաթուղային կայարանի ստորգետնյա անցումի արևելյան հատվածի հետ հատումը, այնուհետև՝ անցումով մինչև Ղանդիլյանի անվան (կայարանամերձ) հրապարակ՝ Ղանդիլյանի հրապարակից և Ղանդիլյան (Սևան) փողոցի հատման կետից Ղանդիլյան փողոցով մինչև Խրիմյան Հայրիկի (Թբիլիսյան խճուղի) փողոցի հետ հատում Խրիմյան Հայրիկի փողոցով մինչև Բարոնյան փողոցի հետ հատումը, Բարոնյան փողոցով մինչև Խանջյան փողոցի հետ հատումը, Խանջյան փողոցով մինչև Կոշտոյան փողոցի հետ հատումը, Կոշտոյան փողոցով մինչև Թետչերի (Շինարարների) փողոցի հետ հատումը, Թետչերի փողոցով մինչև Վ. Սարգսյան (Լենինգրադյան) փողոցի հետ հատումը, Վ. Սարգսյան փողոցով մինչև Տիմիրյազևի փողոցի հետ հատումը, Տիմիրյազևի փողոցով մինչև Մնջոյան փողոցի հետ հատումը, Մնջոյան փողոցով մինչև Շիրակացու փողոցի հետ հատումը, Շիրակացու փողոցով մինչև Դուրուկոյի փողոցի հետ հատումը, Դուրուկոյի փողոցով մինչև Բուլվարային փողոցի հետ հատումը, Բուլվարային փողոցով մինչև գործարանային փողոցի հետ հատումը, այնուհետև՝ դեպի հարավ-արևելք “Կարմիր բերդ” գործարանի հյուսիսային պարսպով մինչև Չերքեզի ձորի հետ հատումը, (սկզբնամաս), Չերքեզի ձորով մինչև Օզանյան փողոցի հետ հատումը, Օզանյան փողոցով մինչև Պլեխանովի փողոցի հետ հատումը, Պլեխանով փողոցով սահմանապահ գործարանի հյուսիսային պարսպով մինչև Գյումրի գետակի հետ հատումը, Գյումրի գետակով մինչև Տաքսամոտորային ձեռնարկության տարածքի հյուսիսային կողմի հետ հատումը, տաքսամոտորային ձեռնարկության հյուսիսային կողմով մինչև Լալայան փողոցի հետ հատումը, Լալայան փողոցով դեպի արևելք՝ մինչև տեղաբաշխված գործարանի հյուսիսային պարսպի հետ հատումը, գործարանի հյուսիսային պարսպով մինչև “Գյումրի հաց” ՓԲԸ հյուսիսային պարսպով մինչև Գյումրի - Երևան երկաթգծի հետ հատումը,

Գյումրի - Երևան երկաթգծով մինչև քաղաքի հարավային սահմանի հետ հատումը (Երևանյան խճուղու սկզբնամաս):

X 0,13 ք. Գյումրի, տասներորդ գոտու ներքին սահմանները համընկնում են իններորդ գոտու արտաքին սահմանագծի հետ, իսկ արտաքին սկզբնամասից դեպի արևմուտք, քաղաքի հարավային սահմանագծով մինչև “Հայնավթամթերք” ՓԲԸ արևմտյան պարսպով մինչև N 2 գերեզմանատան արևելյան պարսպի հետ հատումը, N 2 գերեզմանատան արևելյան պարսպով մինչև Տեր - Գաբրիելյան փողոցի հետ հատումը, Տեր - Գաբրիելյան փողոցով մինչև Ղարսի խճուղու հետ հատումը, Ղարսի խճուղով մինչև քաղաքի արևելյան կողմով անցնող օղակային ավտոճանապարհի հետ հատումը, օղակային ավտոճանապարհով դեպի հյուսիս մինչև Բուլվարային փողոցի հետ հատումը, Բուլվարային փողոցով մինչև Դուրուկոյի փողոցի հետ հատումը, Դուրուկոյի փողոցով մինչև Շիրակացու փողոցի հետ հատումը, Շիրակացու փողոցով մինչև N 8 զինվորական թաղամասի հարավային պարսպի հետ հատումը, N 8 զինվորական թաղամասի հարավային պարսպով մինչև N 8 թաղամասի արևմտյան սահմանի հետ հատումը, N8 թաղամասի արևմտյան սահմանով մինչև Մարմաշենի Խճուղու հետ հատումը, Մարմաշենի խճուղով մինչև Ավստրիական թաղամաս տանող ճանապարհի հետ հատումը, Ավստրիական թաղամաս տանող ճանապարհով՝ մինչև Ավստրիական թաղամասի արևելյան սահմանի հետ հատումը, Ավստրիական թաղամասի արևելյան սահմանով մինչև Անի թաղամասի արևմտյան սահմանի հետ հատումը, Անի թաղամասի արևմտյան սահմանով մինչև Մինաս Ավետիսյան փողոցի հետ հատումը, Մինաս Ավետիսյան փողոցով մինչև Մ. Խորենացու փողոցի հետ հատումը, Մ. Խորենացու փողոցով

մինչև Սախարովի հրապարակ, Սախարով հրապարակն ամբողջությամբ, այնուհետև՝ Վ.Սարգսյան փողոցով մինչև Սավոյան փողոցի հետ հատումը, Սավոյան փողոցով մինչև Դանիելյան փողոցի հետ հատումը, Դանիելյան փողոցով մինչև Թետչերի (Շինարարների) փողոցի հետ հատումը, Թետչերի փողոցով դեպի արևելք՝ հատելով Գյումրի գետակը, մինչև զորամասի պարսպի հետ հատումը, զորամասի արևմտյան պարսպով մինչև Խրիմյան Հայրիկի (Թբիլիսյան) փողոցի հոտ հատումը, Խրիմյան Հայրիկի փողոցով մինչև Գյումրի–Թբիլիսի երկաթգծի հետ հատումը, Գյումրի–Թբիլիսի երկաթգծով մինչև երկաթուղային կայարանի ստորգետնյա անցումի արևելյան կողմի հետ հատումը:

XI 0,11 ք. Գյումրի, տասնմեկերորդ գոտու արտաքին սահմաններն անցնում, են քաղաքի արտաքին սահմանագծով՝ բացառությամբ ԼենչԷԿ ավանի և այն սահմանագծերի, որտեղ քաղաքի արտաքին սահմանագիծն համընկնում է իններորդ կամ տասներորդ գոտիների արտաքին սահմանների հետ: Գոտու ներքին սահմանները Երկաթուղային կայարանի անցումի արևելյան կողմից մինչև քաղաքի հարավային սահմանագիծը (Երևանյան խճուղու սկզբնամաս) և Բուլվարային փողոցի:

Գործարանային փողոցի հետ հատման տեղամասից մինչև Շիրակացու և Մնջոյան փողոցների հատման տեղամասը համընկնում են I X գոտու արտաքին սահմանների հետ: Մնացած հատվածներում ներքին սահմանները համընկնում են X գոտու արտաքին սահմանների հետ:

ք. Արթիկ, տասնմեկերորդ գոտու սահմաններն անցնում են հետևյալ փողոցներով՝ սկսած Գ. Նարեկացու և Բաղրամյան փողոցների հատումից, Գ. Նարեկացու փողոցով մինչև Կոմիտասի փողոցի հետ հատումը, Կոմիտասի փողոցով մինչև Գ. Լուսավորիչի փողոցի հետ հատումը, Գ. Լուսավորիչի

փողոցով մինչև Տոնականյան փողոցի հետ հատումը, Տոնականյան փողոցով մինչև Պռոշյան փողոցի հետ հատումը, Պռոշյան փողոցով մինչև Տուֆագործների փողոցի հետ հատումը, Տուֆագործների փողոցով և 7 –րդ դպրոցի շրջակայքով մինչև Բաբաջանյան նրբանցքի և Անկախության փողոցի հետ հատումը, Բաբաջանյան նրբանցքով մինչև Տուֆագործների փողոցի հետ հատումը, Տուֆագործների փողոցով Արթիկ տուֆի կառամատույցներով մինչև Շահումյան փողոցի հետ հատումը, Շահումյան փողոցն ամբողջությամբ մինչև գլխավոր հատակագծով նախատեսված փողոցի հետ հատումը, վերը նշված փողոցով մինչև Աբովյան փողոցի հետ հատումը, Աբովյան փողոցով մինչև Թումանյան փողոցի հետ հատումը, Թումանյան փողոցով մինչև Սասունցի Դավթի փողոցի հետ հատումը, Սասունցի Դավթի փողոցով մինչև Շինարարների փողոցի հետ հատումը, Երկաթգծով մինչև Բաղրամյան և Գ.Նարեկացու փողոցների հատումը:

* ոչ պաշտոնական հրապարակումներ

** տպագրվում է կրճատումներով

9. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
2. ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948թ. դեկտեմբերի 10)
3. Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա (Ստրասբուրգ, 1996թ. մայիսի 3)
4. ՀՀ Կառավարության որոշումներ (18 մայիսի 2006 թ. N 912-Ն, փոփոխություններով և լրացումներով, 11 սեպտեմբերի 2008 թ. N 1024-Ն, 17.04.03թ. 470-Ն)
5. ՀՀ օրենքը Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին (փոփոխություններով և լրացումներով)
6. ՀՀ Հողային օրենսգիրք
7. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք
8. «Իմացիր և գործիր» ձեռնարկ – Երևան 2007, «Միլենիում» կրթական հետազոտական ասոցիացիա
9. «Սեփականության և աշխատանքային իրավունքների պաշտպանության ուղեցույց» -Երևան 2008, «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ

*ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ*

Ծրագրի ղեկավար՝ Վահան Թումասյան
Ծրագրի համակարգող՝ Արդա Խաչատրյան
Աշխատանքային խումբ՝ Ն. Թումասյան,
Գ. Մկրտչյան, Զ. Գրիգորյան

*Շիրակի մարզ , 3101, Գյումրի
Վարպետաց 176, 301
հեռ. +(374 312) 6-69-92
+(374 91) 45-13-37
Էլ. փոստ՝ info@shirakcentre.org
Վեբ կայք՝ www.shirakcentre.org*

*Գյումրի
2010*

ԱՌԱՋԻՆ ԷԶՈՒՄ ՊԱՏԿԵՐՎԱԾ ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

	ԲՆԱԿՎԵԼԻ ԳՈՏԻ
	ՀԱՄԱՔԱՂԱՔՍՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱՏՈՒԿՑԻՈՆԱԼ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ
	ԵԿԵՂԵՑԻՆԵՐ
	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ
	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
	ՄԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ
	ԿԱՆԱԶ ԳՈՏԻ
	ԻՋԵՑՆՈՂ ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐ, ԿԱԹՄԱՑԱՆԱՏԵՐ
	ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔՆԵՐ
	ՊԱՀՈՒՍՏԱՑԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ
	ԲՈՒՖԵՐԱՑԻՆ ԳՈՏԻ
	ԶՐԱՑԻՆ ՄԱԿԵՐԵՄՆԵՐ
	ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ
	ԵՐԿԱԹԳԻԾ
	ՊՈՏԵՆՑԻԱԼ ՊԵՂՄԱՆ ԳՈՏԻՆԵՐ
	ԲԵՐԴԵՐ
	«ԿՈՒՍՄՑՐԻ» ԱՐԳԵԼՈՑԻ ՄԱՀՄԱՆԸ
	ՆԱՌԱԳԾՍՑԻՆ ՎԱՐԶԱԿԱՆ ՄԱՀՄԱՆ
	ԱՎՏՈԿԱՅԱՆ